«ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ

Համախմբված Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

2025թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 1

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 4

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 5

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 6

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 7

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 9

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԴԱՅՄԵՆՇՆ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԴԱՅՄԵՆՇՆ» փակ բաժնետիրական և նրա դուստրեր՝ «ԴԱՅՄԵՆՇՆ ՖԱՆԴԶ ՄԵՆԵՋՄԵՆԹ» և «ՆՈՐՔՔԵՓ ՍԵՔՅՈՒՐԻԹԻԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 2025թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար :

Crowe Armenia LLC
"Dom Moskvy" Business Center,
7, Argishti str., 2nd floor,
Yerevan, 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
www.crowe.com

Քրոու Արմենիա ՍՊԸ
«Դոմ Մոսկվի» Բիզնես Կենտրոն,
Արգիշտի փող., 7, 2-րդ հարկ,
ք. Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
www.crowe.com

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացված աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:

Crowe

- Եզրահանգում ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Խմբի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Սյուն աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտորական առաջադրանքի պատասխանատուն Աննա Բաբայանն է:

28 ապրիլի 2026թ.

Ալբերտ Ասատրյան	Աննա Բաբայան
Տնօրեն-բաժնետեր	Առաջադրանքի պատասխանատու

Քրոու Արմենիա ՍՊԸ
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Crowe Armenia LLC

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային եկամուտ		63,985	74,317
Տոկոսային ծախս		(20,265)	(28,690)
Զուտ տոկոսային եկամուտ	4	43,720	45,627
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		192,731	152,154
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(52,823)	(44,052)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	5	139,908	108,102
Զուտ (ծախս)/եկամուտ առևտրային գործունեությունից	6	(3,618)	32,705
Այլ գործառնական եկամուտներ		688	90
Գործառնական եկամուտ		180,698	186,524
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին		(50)	551
Անձնակազմի գծով ծախսեր		(88,214)	(80,371)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	7	(91,760)	(75,826)
Շահույթ մինչև հարկումը		674	30,879
Շահութահարկի գծով ծախս	8	(6,197)	(7,401)
Տարվա (վնաս)/շահույթ		(5,523)	23,478
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատում		24,718	31,787
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի վերադասակարգում շահույթին կամ վնասին		(3,962)	4,616
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի գծով շահութահարկ		(3,727)	(6,652)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	21.2	17,029	29,751
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		11,506	53,229

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. ապրիլի 28-ին՝

Գայանե Արզումանյան
Գլխավոր տնօրենի ժամանավոր պաշտոնակատար

Արմեն Ազիզյան
Գլխավոր հաշվապահ

«ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ
"ДАЙМЕНШН" ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
"DIMENSION" CLOSED JOINT-STOCK COMPANY
02684222
ԵՐԵՎԱՆ
YEREVAN

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող 9-ից մինչև 49-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	78,214	22,228
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	10	26,120	18,170
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	11	696,504	671,393
Գուդվիլ	12	1,340	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	13	5,097	4,996
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	14	6,126	13,452
Հետաձգված հարկային ակտիվ	15	-	3,322
Այլ ակտիվներ	16	6,196	80,982
Ընդամենը ակտիվներ		819,597	814,543
Պարտավորություններ			
Դրամական շուկայից ստացված փոխառություններ	17	228,823	298,044
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		4,374	873
Վարձակալության գծով պարտավորություններ	18	7,011	14,327
Հետաձգված հարկային պարտավորություններ	15	267	-
Փոխառություններ	19	50,000	-
Այլ պարտավորություններ և պահուստներ	20	28,296	15,941
Ընդամենը պարտավորություններ		318,771	329,185
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	21	434,020	434,020
Էմիսիոն եկամուտ		16,088	16,088
Գլխավոր պահուստ		7,350	7,350
Չբաշխված շահույթ		36,459	38,020
Սեփական կապիտալի այլ տարրեր		6,909	(10,120)
Ընդամենը սեփական կապիտալ		500,826	485,358
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		819,597	814,543

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող 9-ից մինչև 49-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	431,670	16,088	5,450	68,541	(39,871)	481,878
Տարվա շահույթ	-	-	-	23,478	-	23,478
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	25,135	25,135
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	23,478	25,135	48,613
Կապիտալի համալրում	2,350	-	-	-	-	2,350
Ծահաբաժիններ	-	-	-	(47,483)	-	(47,483)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	2,350	-	-	(47,483)	-	(45,133)
Այլ համապարփակ եկամտի վերադասակարգում շահույթին կամ վնասին	-	-	-	(4,616)	4,616	-
Մասհանումներ գլխավոր պահուստին	-	-	1,900	(1,900)	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	434,020	16,088	7,350	38,020	(10,120)	485,358
Տարվա վնաս	-	-	-	(5,523)	-	(5,523)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	20,991	20,991
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(5,523)	20,991	15,468
Այլ համապարփակ եկամտի վերադասակարգում շահույթին կամ վնասին	-	-	-	3,962	(3,962)	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	434,020	16,088	7,350	36,459	6,909	500,826

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող 9-ից մինչև 49-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	674	30,879
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	9,513	10,024
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	50	(551)
Հիմնական միջոցների դուրսգրումից վնաս	-	30
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վաճառքից վնաս/(օգուտ)	758	(38,134)
Չօգտագործված արձակուրդի պահուստ	(649)	1,231
Հաշվեգրված տոկոսներ	(43,720)	(45,627)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	3,095	4,644
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	(30,279)	(37,504)
Այլ ակտիվների փոփոխություն	2,086	1,334
Հաճախորդների նկատմամբ պահանջների փոփոխություն	(7,950)	(5,147)
Այլ պարտավորությունների փոփոխություն	16,505	(14,265)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(19,638)	(55,582)
Ստացված տոկոսներ	63,173	64,230
Վճարված տոկոսներ	(18,118)	(28,884)
Վճարված շահութահարկ	(6,197)	(7,093)
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	19,220	(27,329)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Դուստր կազմակերպության վաճառք	1,000	-
Դուստր կազմակերպության ձեռք բերում	(1,350)	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(2,443)	(1,020)
Վարձակալության գծով կրեդիտորական պարտքի մարում	(9,100)	(8,400)
Տրված վարկեր և փոխառություններ	(58,377)	(121,000)
Տրված վարկերի և փոխառությունների մարում	131,377	119,379
Ներդրումային գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	61,107	(11,041)

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Կանոնադրական կապիտալի համալրում	-	2,350
Վճարված շահաբաժին	-	(47,483)
Արժեթղթերի ձեռքբերում	(471,534)	(3,418,438)
Արժեթղթերի վաճառք	466,133	3,770,153
Ստացված վարկեր	50,000	-
Ավանդի ներգրավում	-	(19,813)
Ավանդի մարում	-	19,756
Ռեպոյի ներգրավում	702,049	1,575,492
Ռեպոյի մարում	(771,244)	(1,910,624)
Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(24,596)	(28,607)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	55,731	(66,977)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	255	(3,448)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ	22,228	92,653
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	78,214	22,228

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 49-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպություն, դուստր ընկերությունների հետ միասին՝ Խումբ) հիմնադրվել է 2018թ-ի սեպտեմբերի 28-ին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով ՀՀ օրենսդրության շրջանակներում: Խումբը գրանցվել է ՀՀ ԿԲ-ում որպես ներդրումային ընկերություն և ստացել է իր անունից և իր հաշվին արժեթղթերով գործարքների կատարման թիվ 0014 լիցենզիան:

2020թ.-ին Կազմակերպությունը ձեռք է բերել «ԴԱՅՄԵՆՇՆ ՖԱՆԴԶ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ-ի փայամասնակցությունների ամբողջական ծավալը, որը վաճառել է 2025թ. ընթացքում: 2025 թվականին Խումբը նաև ձեռք է բերել «ՆՈՐՔՔԵՓ ՍԵՔՅՈՒՐԻԹԻԶ» ՍՊԸ-ի փայամասնակցությունների ամբողջական ծավալը, որը հետագայում վաճառել է 2026 թ. փետրվարին: Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, իսկ գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Խորհուրդը: Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Կազմակերպության գլխավոր տնօրենը: Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը Գայանե Արզումանյանն է: Կազմակերպության ղեկավարության վարձատրության չափը որոշվում է կառավարման համապատասխան մարմնի որոշմամբ:

Կազմակերպությունը գործունեություն է իրականացնում բացառապես ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայով թույլատրվող հիմնական և ոչ հիմնական ներդրումային ծառայությունների տեսակներով, մասնավորապես՝ հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման համար պատվերների ընդունում, իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում, արժեթղթերի փաթեթի կառավարում, իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարում, արժեթղթերի երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխման իրականացում, արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում, ինչպես նաև արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունների իրականացում:

Կազմակերպության իրավաբանական և գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան պող., 2 շենք, տարածք 27/1:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը մասնաճյուղեր չունի:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի աշխատողների թիվը 12 է (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 14):

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 22-ում:

2.5 Նոր և փոփոխված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք ուժի մեջ են մտնում ընթացիկ տարվա համար

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Խումբն առաջին անգամ կիրառել է որոշակի ստանդարտներ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Խումբը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը թողարկվել է, բայց դեռ ուժի մեջ չի մտել:

ՖՀՄՍ հիմնադրամի կողմից ավարտված ծրագրեր	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար	Կիրառելիությունը
Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում. «*Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները*»՝ Փոխանակելիության բացակայություն	1 հունվարի 2025թ.	Առաջընթաց

Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում. «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները»՝ Փոխանակելիության բացակայություն

Փոխանակելիության բացակայության վերաբերյալ փոփոխությունները (Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում) փոփոխում են ՀՀՄՍ 21-ը, որպեսզի.

- հստակեցվի, թե երբ է արժույթը փոխանակելի այլ արժույթի, և երբ ոչ՝ արժույթը փոխարկելի է, երբ Ընկերությունը կարող է փոխարկել այդ արժույթը մյուս արժույթի հետ այնպիսի շուկայով կամ փոխարկման մեխանիզմներով, որոնք ստեղծում են իրավունքներ և պարտականություններ առանց անհարկի ուշացումների չափման ամսաթվին և հատուկ նպատակի համար: Արժույթը փոխարկելի չէ մյուս արժույթի հետ, եթե Ընկերությունը կարող է միայն ստանալ աննշան չափի գումար մյուս արժույթից:
- հստակեցվի, թե ինչպես է կազմակերպությունը որոշում փոխարժեքը, որը պետք է կիրառվի, երբ արժույթը փոխանակելի չէ՝ երբ արժույթը չափման ամսաթվին փոխարկելի չէ, կազմակերպությունը գնահատում է սփոթ փոխարժեքը որպես փոխարժեք, որը կկիրառվեր շուկայական մասնակիցների միջև՝ չափման ամսաթվին և որը ճշգրտորեն կարտացոլեր այն տնտեսական պայմանները, որոնք առկա են տվյալ պահին:
- պահանջվի լրացուցիչ տեղեկատվության բացահայտում, երբ արժույթը փոխանակելի չէ՝ երբ արժույթը փոխարկելի չէ, կազմակերպությունը պետք է բացահայտի տեղեկատվություն, որը թույլ կտա ֆինանսական հաշվետվությունները օգտագործողներին գնահատել, թե ինչպես է արժույթի փոխարկման անկարողությունն ազդեցություն ունենում կամ ակնկալվում է, որ ազդեցություն կունենա նրա ֆինանսական արդյունքի, ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա:

Այս հայտարարությունը նաև ներառում է նոր հավելված, որը ներկայացնում է գործնական ուղեցույց փոխարկելիության վերաբերյալ և նոր ցուցադրական օրինակ:

Փոփոխությունները տարածվում են նաև ՖՀՄՍ 1-ի համապատասխան փոփոխությունների վրա, որոնք նախկինում անդրադարձել են, բայց չեն սահմանել փոխանակելիությունը:

Նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք հրապարակված են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Խումբը չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտները, որոնք թողարկվել են, բայց դեռ ուժի մեջ չեն.

ՖՀՄՍ հիմնադրամի կողմից ավարտված ծրագրեր	**Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար**	**Կիրառելիությունը**
Փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում. *«Ֆինանսական գործիքներ»* և ՖՀՄՍ 7-ում. *«Ֆինանսական գործիքներ՝ բացահայտումներ»*. Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում	1 հունվարի 2026թ.	Հետընթաց
ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների տարեկան բարելավումներ – Հատոր 11	1 հունվարի 2026թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում. *«Ֆինանսական գործիքներ»* և ՖՀՄՍ 7-ում. *«Ֆինանսական գործիքներ՝ բացահայտումներ»*. բնական էլեկտրաէներգիային վերաբերող պայմանագրեր	1 հունվարի 2026թ.	Հետընթաց

ՖՀՄՍ 18. *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտումներ»*	1 հունվարի 2027թ.	Հետընթաց
ՖՀՄՍ 19. *«Առանց հանրային հաշվետվողականության դուստր ընկերություններ. բացահայտումներ»*	1 հունվարի 2027թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում. *«Համախմբված ֆինանսական հաշվետվություններ»* և ՀՀՄՍ 28. *«Ներդրումներ ասոցիացված և դուստր ընկերություններում»*- Ներդրողի և նրա ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության միջև ակտիվների վաճառք կամ ներդրում	Դեռևս չի սահմանվել ՖՀՄՍ Խորհրդի կողմից	-

Փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում. «Ֆինանսական գործիքներ» և ՖՀՄՍ 7-ում. «Ֆինանսական գործիքներ՝ բացահայտումներ». Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում

ՖՀՄՍ 9-ի կիրառման ուղեցույցների փոփոխությունները թույլատրում են կազմակերպությանը համարել ֆինանսական պարտավորությունը (կամ դրա մասը), որը կմարվի էլեկտրոնային վճարային համակարգի միջոցով, դուրս գրված մինչև վճարման ամսաթվը, եթե բավարարված են որոշակի չափանիշներ: Կազմակերպությունը, որն ընտրում է կիրառել ապաճանաչման հնարավորությունը, պետք է այն կիրառի բոլոր վճարումների դեպքում, որոնք կատարվում են նույն էլեկտրոնային վճարային համակարգի միջոցով:

ՖՀՄՍ 9-ի կիրառման ուղեցույցների փոփոխությունները տրամադրում են ցուցումներ, թե ինչպես կարող է կազմակերպությունը գնահատել, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային կանխիկ հոսքերը համապատասխան են հիմնական վարկային համաձայնագրին: Կիրառման ուղեցույցներում կատարված փոփոխությունները ցույց տալու համար ավելացվել են օրինակներ այնպիսի ֆինանսական ակտիվների վերաբերյալ, որոնք ունեն կամ չունեն պայմանագրային կանխիկ հոսքեր, որոնք միայն մայր գումարի և մնացորդային մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Փոփոխություններն ընդլայնում են «առանց ռեգրեսի իրավունքի» տերմինի բացատրությունը: Ըստ փոփոխությունների՝ ֆինանսական ակտիվը համարվում է առանց ռեգրեսի իրավունքի, եթե կազմակերպության՝ կանխիկ հոսքեր ստանալու վերջնական իրավունքները պայմանագրով սահմանափակված են միայն որոշակի ակտիվների կողմից ստեղծված կանխիկ հոսքերով:

Փոփոխությունները պարզաբանում են պայմանագրով կապված գործիքների հատկանիշները, որոնք տարբերակում են դրանք այլ գործարքներից: Փոփոխությունները նաև նշում են, որ մի քանի պարտքային գործիքներ ներառող ոչ բոլոր գործարքներն են բավարարում մի քանի պայմանագրով կապված գործիքների գործարքների պահանջներին և տալիս են օրինակ: Բացի դրանից, փոփոխությունները պարզաբանում են, որ հիմնական բազայի գործիքների մեջ նշված գործիքները կարող են ներառել ֆինանսական գործիքներ, որոնք չեն մտնում դասակարգման պահանջների շրջանակի մեջ:

ՖՀՄՍ 7-ի պահանջները փոփոխված են՝ այն բացահայտումների համար, որոնք կազմակերպությունը պետք է ներկայացնի այս ներդրումների վերաբերյալ: Մասնավորապես, կազմակերպությունը պետք է բացահայտի այլ համապարփակ եկամուտներում ընթացիկ ժամանակաշրջանում ներկայացված իրական արժեքից շահույթը կամ վնասը, առանձին ցույց տալով այն իրական արժեքից շահույթը կամ վնասը, որը վերաբերում է ժամանակաշրջանի ընթացքում ապաճանաչված ներդրումներին, և այն իրական արժեքից շահույթը կամ վնասը, որը վերաբերում է ժամանակաշրջանի վերջում ունեցած ներդրումներին:

Փոփոխությունները պահանջում են պայմանագրային պայմանների բացահայտում, որոնք կարող են փոփոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամանակացույցը կամ գումարը պայմանավորված պայմանական դեպքի տեղի ունենալով (կամ չունենալով), որը չի վերաբերում անմիջականորեն հիմնական վարկային ռիսկերի և ծախսերի

փոփոխություններին: Պահանջները վերաբերում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամուտներով չափվող ֆինանսական ակտիվների յուրաքանչյուր դասին և ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների յուրաքանչյուր դասին:

Փոփոխությունները նաև ներառում են փոփոխություններ ՖՀՄՍ 19-ում՝ *«Առանց հանրային հաշվետվողականության դուստր ընկերություններ. բացահայտումներ»*, որոնք սահմանափակում են բացահայտման պահանջները որակավորվող դուստր ձեռնարկությունների համար:

ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների տարեկան բարելավումներ –Հատոր 11

Այս փոփոխություններն ուղղված են գործող ստանդարտներում առկա մանր սխալների պարզաբանմանը և բարելավումներին, որոնց հիմնական նպատակը հետևողականության ապահովումն է և գործնականում առաջացած խնդիրների լուծումը:

Փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում. «Ֆինանսական գործիքներ» և ՖՀՄՍ 7-ում. «Ֆինանսական գործիքներ՝ բացահայտումներ». բնական էլեկտրաէներգիային վերաբերող պայմանագրեր

Փոփոխությունները վերաբերում են ՖՀՄՍ 9-ի հետևյալ պահանջներին.

- ՖՀՄՍ 9-ում «սեփական օգտագործման» պահանջները փոփոխվել են՝ ներառելով այն գործոնները, որոնք կազմակերպությունը պարտավոր է դիտարկել ՖՀՄՍ 9.2.4-ի կիրառման ժամանակ՝ վերականգնվող էլեկտրաէներգիա գնելու և մատակարարումն ընդունելու պայմանագրերի նկատմամբ, երբ էլեկտրաէներգիայի արտադրության աղբյուրը կախված է բնությունից, և

- ՖՀՄՍ 9-ի հեջավորման հաշվառման պահանջները փոփոխվել են՝ թույլ տալու համար կազմակերպությանը, որն օգտագործում է բնությունից կախված վերականգնվող էլեկտրաէներգիայի պայմանագիր՝ հատուկ բնութագրերով, այդ պայմանագիրը կիրառել որպես հեջավորման գործիք, մասնավորապես՝

  - նշանակել կանխատեսվող էլեկտրաէներգիայի գործարքների փոփոխական ծավալ որպես հեջավորվող հոդված, եթե կատարված են սահմանված չափանիշները, և
  - հեջավորվող հոդվածը գնահատել՝ օգտագործելով նույն ծավալային ենթադրությունները, ինչպիսիք օգտագործվում են հեջավորման գործիքի համար:

ՖՀՄՍ 7-ը և ՖՀՄՍ 19-ը փոփոխվել են՝ ներդնելու բացահայտման պահանջներ՝ բնությունից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ հատուկ բնութագրերով պայմանագրերի մասին:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026 թ. հունվարի 1-ից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, իսկ ավելի վաղ կիրառումը թույլատրվում է:

Սեփական օգտագործման բացառությանը վերաբերող փոփոխությունները պարտադիր է կիրառել հետընթաց կարգով՝ ՀՀՄՍ 8-ի համաձայն՝ հիմք ընդունելով սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ առկա փաստերն ու հանգամանքները: Հեջավորման հաշվառման պահանջների փոփոխությունները կիրառվում են առաջընթաց կարգով՝ նոր հեջավորման հարաբերությունների նկատմամբ, որոնք սահմանվել են սկզբնական կիրառման ամսաթվին կամ դրանից հետո:

ՖՀՄՍ 18. «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտումներ»

ՖՀՄՍ 18-ը փոխարինում է ՀՀՄՍ 1-ին՝ պահպանելով վերջինիս պահանջներից շատերը առանց փոփոխությունների և հավելելով դրանք նոր պահանջներով: Ավելին, ՀՀՄՍ 1-ի որոշ պարբերություններ տեղափոխվել են ՀՀՄՍ 8 և ՖՀՄՍ 7: Ինչպես նաև, ՀՀՄՍԽ-ն կատարել է փոքր փոփոխություններ ՀՀՄՍ 7 և ՀՀՄՍ 33. *«Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ»* ստանդարտներում:

ՖՀՄՍ 18-ը ներմուծում է նոր պահանջներ՝

• ներկայացնել որոշակի կատեգորիաներ և սահմանված ենթագումարներ շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում

• տրամադրել բացահայտումներ ղեկավարության սահմանած կատարողական չափանիշների վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում

• բարելավել համախմբումն ու տարանջատումը:

ՖՀՄՍ 19. «Առանց հանրային հաշվետվողականության դուստր ընկերություններ. բացահայտումներ»

ՖՀՄՍ 19-ը թույլատրում է որակավորվող դուստր ձեռնարկությանը տրամադրել նվազեցված բացահայտումներ՝ ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտներն իր ֆինանսական հաշվետվություններում կիրառելիս:

Դուստր ձեռնարկությունը կարող է օգտվել նվազեցված բացահայտումներից, եթե այն չունի հանրային հաշվետվողականություն և դրա վերջնական կամ որևէ միջանկյալ մայր ձեռնարկությունը պատրաստում է համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք հասանելի են հանրային օգտագործման համար և համապատասխան են ՖՀՄՍ ստանդարտներին:

ՖՀՄՍ 19-ն ընտրովի է այն դուստր ձեռնարկությունների համար, որոնք համապատասխանում են այս պահանջներին, և սահմանում է այն դուստր ձեռնարկությունների համար բացահայտման պահանջները, որոնք ընտրում են կիրառել սույն ստանդարտը:

Փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում. «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ» և ՀՀՄՍ 28. «Ներդրումներ ասոցիացված և դուստր ընկերություններում» - Ներդրողի և նրա ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության միջև ակտիվների վաճառք կամ ներդրում

ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի փոփոխությունները վերաբերում են իրավիճակներին, երբ ներդրողի և նրա ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության միջև կա ակտիվների վաճառք կամ ներդրում: Մասնավորապես, փոփոխությունները նշում են, որ դուստր կազմակերպության նկատմամբ (որը բիզնես չէ) վերահսկողության կորստից առաջացող օգուտները կամ վնասները բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության հետ գործարքում ճանաչվում են մայր կազմակերպության շահույթում կամ վնասում միայն այդ ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումում չկապակցված ներդրողների բաժնեմասերի չափով: Նմանապես, ցանկացած նախկին դուստր կազմակերպությունում (որը դարձել է ասոցիացված կամ համատեղ ձեռնարկում, որը հաշվառվում է սեփական կապիտալի մեթոդով) պահպանված ներդրումների իրական արժեքով վերաչափումից առաջացած օգուտները և վնասները ճանաչվում են նախկին մայր կազմակերպության շահույթում կամ վնասում միայն նոր ասոցիացված

կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումում չկապակցված ներդրողների բաժնեմասերի չափով:

Խմբի ղեկավարությունը չի կանխատեսում, որ այս փոփոխությունների կիրառումն էական ազդեցություն կունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

2.6 Դուստր ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունները.

2025թ. դեկտեմբերի 31 Դուստր ընկերություն	Մասնա-բաժին %	Գրանցման երկիր	Գործու-նեության ոլորտ	Ձեռք-բերման ամսաթիվ
Նորքքեփ Սեքյուրիթիզ ՍՊԸ *	100	ՀՀ	Ֆոնդերի կառավարում	31/10/2025

2024թ. դեկտեմբերի 31 Դուստր ընկերություն	Մասնա-բաժին %	Գրանցման երկիր	Գործու-նեության ոլորտ	Ձեռք-բերման ամսաթիվ
Դայմենշն Ֆանդզ Մենեջմենթ ՍՊԸ **	100	ՀՀ	Ֆոնդերի կառավարում	19/02/2020

* Ընկերությունը ձեռք է բերվել 2025թ. հոկտեմբերի 31-ին և վաճառվել է 2026թ. փետրվարի 6-ին :
** Ընկերությունն օտարվել է 2025թ. հունիսի 4-ն: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են ընկերության գործունեության արդյունքները մինչև 03.06.2025թ.:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Համախմբման հիմքերը

Դուստր ընկերություններ

Դուստր ընկերությունները, որոնց գործունեության նկատմամբ Խումբը վերահսկողություն է իրականացնում, համախմբվում են: Վերահսկողությունն իրականացվում է այն դեպքում, երբ Խումբն իրավունք ունի ներդրումներից ստանալ փոփոխական արդյունքներ կամ ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին և կարող է ազդել այդ ներդրումներից ստացվող արդյունքների վրա իր իրավասությունների միջոցով: Մասնավորապես, Խումբը վերահսկում է ներդրումը միայն եւ միայն այն դեպքում, երբ բավարարվում են հետեւյալ պայմանները՝

- Խումբն ունի իրավասություն ներդրման օբյեկտի նկատմամբ (այսինքն՝ գոյություն ունեցող իրավունքներ, որոնք ապահովում են ներդրման օբյեկտի նշանակալի գործունեությունը կառավարելու հնարավորություն),
- Խումբն ունի իրավունք ներդրումներից ստացվող փոփոխական արդյունքների նկատմամբ և ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին,

- Խումբն ունի հնարավորություն օգտագործելու իր իրավասությունները ներդրման օբյեկտի նկատմամբ՝ ներդրումներից փոփոխական արդյունքների վրա ազդելու նպատակով:

Որպես կանոն, ենթադրվում է, որ վերահսկողությունը պայմանավորված է ձայնի իրավունքի մեծամասնությամբ: Սույն ենթադրության հաստատման, ինչպես նաև Խմբի մոտ մեծամասնությունից ավելի քիչ քվեարկման կամ ներդրման օբյեկտի նկատմամբ մեծամասնությունից ավելի քիչ նմանատիպ իրավունքների առկայության դեպքում Խումբը հաշվի է առնում է բոլոր փաստերը և հանգամանքները տվյալ ներդրման օբյեկտի նկատմամբ իրավասության առկայությունը գնահատելիս, ներառյալ՝

- ներդրման օբյեկտի նկատմամբ ձայնի իրավունք ունեցող անձանց հետ պայմանագրային համաձայնությունը,
- այլ համաձայնագրերից ծագող իրավունքները,
- Խմբին պատկանող առկա և հնարավոր քվեարկման իրավունքները:

Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է, երբ Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր ընկերության նկատմամբ և դադարում է, երբ Խումբը կորցնում է այդ վերահսկողությունը: Ներխմբային բոլոր գործարքները, ինչպես նաև այդ գործարքների արդյունքում առաջացած մնացորդներն ու չիրացված օգուտները ամբողջությամբ բացառվում են: Չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին: Անհրաժեշտության դեպքում դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները ճշգրտվում են՝ այդ ընկերությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունները Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխանեցնելու նպատակով:

Առանց վերահսկման կորստի դուստր ընկերությունում մասնակցության փոփոխությունը հաշվառվում է որպես սեփական կապիտալում փոփոխություն:

Եթե Խումբը կորցնում է դուստր կազմակերպության նկատմամբ վերահսկողությունը, այն ապաճանաչում է դուստր կազմակերպության ակտիվները (ներառյալ՝ գուդվիլը) և պարտավորությունները, ցանկացած չվերահսկվող բաժնեմասի հաշվեկշռային արժեքը և սեփական կապիտալի այլ տարրերը, իսկ գործարքի արդյունքում առաջացած օգուտը կամ վնասը ճանաչում է շահույթում կամ վնասում: Պահպանված ցանկացած ներդրում ճանաչվում է իրական արժեքով:

Ասոցիացված կազմակերպություններ

Ասոցիացված կազմակերպությունն այն կազմակերպությունն է, որտեղ Խումբը նշանակալի ազդեցություն ունի և որը չի հանդիսանում ներդրողի ո՛չ դուստր, ո՛չ էլ համատեղ ձեռնարկում: Նշանակալի ազդեցություն է համարվում ներդրման առարկա հանդիսացող ընկերության ֆինանսական և գործառնական քաղաքականության գծով որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորությունը, բայց ոչ այդ քաղաքականության վերահսկողությունը կամ համատեղ վերահսկողությունը:

Ասոցիացված կազմակերպությունների գործունեության արդյունքները, ինչպես նաև ակտիվներն ու պարտավորությունները ներառված են սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ հաշվապահական հաշվառման բաժնեմասնակցության մեթոդով,

բացառությամբ վաճառքի համար մատչելի ակտիվների, որոնք հաշվառվում են՝ համաձայն ՖՀՄՍ 5. «*Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատվող գործունեություն*»: Համաձայն բաժնեմասնակցության մեթոդի՝ ասոցիացված ընկերություններում ներդրումները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում գրանցվում են ինքնարժեքով, իսկ հետագայում՝ ճշգրտվում ձեռքբերումից հետո ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում ընկերության բաժնեմասի փոփոխությունների չափով՝ նվազեցված առանձին ներդրումների արժեզրկման չափով: Խմբի մասնակցությունից դուրս ասոցիացված կազմակերպության կորուստները չեն ճանաչվում, եթե միայն Խումբն իրավական կամ կառուցողական պարտավորություններ չի կրել կամ ասոցիացված կազմակերպության անունից վճարումներ չի իրականացրել:

Ձեռք բերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասը գերազանցող ձեռքբերման արժեքի մեծությունը ճանաչվում է որպես գուդվիլ: Գուդվիլը ներառված է ներդրման հաշվեկշռային արժեքում և արժեզրկման համար գնահատվում է որպես ներդրման մաս: Ձեռքբերման արժեքի ցանկացած գերազանցում ձեռքբերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասի նկատմամբ, վերագնահատումից հետո, ուղղակիորեն ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Խմբի և ասոցիացված կազմակերպության միջև տեղի ունեցած գործարքներից առաջացած շահույթը և վնասը բացառվում են տվյալ ասոցիացված ընկերությունում Խմբի համապատասխան բաժնեմասի սահմաններում:

3.2 Ընդհանուր դրույթներ և ՖՀՄՍ-ի առաջին անգամ ընդունումը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, որոնք ուժի մեջ են եղել 2025թ. դեկտեմբերի 31-ին:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել և վաղաժամ չեն ընդունվել Խմբի կողմից, ներկայացված են ծանոթագրություն 2.5-ում:

Էական հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները, որոնք կիրառվել են համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ներկայացված են ստորև:

3.3 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Համախմբված Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված սփոթ փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները

պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված սփոթ փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված սփոթ փոխարժեքները.

Արժույթ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	381.36	396.56
Ֆունտ ստեռլինգի	515.60	499.27
Եվրո	449.01	413.89

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

3.4 Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային և այլ տեխնիկա	5 տարի
Գույք և գրասենյակային սարքավորումներ	8 տարի
Այլ հիմնական միջոցներ	8 տարի

3.5 Վարձակալված ակտիվներ

Խումբը նախ և առաջ գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում կամ պարունակում է վարձակալություն: Այսինքն, արդյոք պայմանագրով իդենտիֆիկացվող ակտիվի օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածով փոխանցվում է փոխհատուցման դիմաց:

Խումբը որպես վարձակալ

Խումբը կիրառում է միանման մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալության: Խումբը ճանաչում է պարտավորություն վարձակալության վճարների ներկա արժեքը՝ Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով, և Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը, որն իրենից ներկայացնում է տվյալ ակտիվի օգտագործման իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Խումբն օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչում է վարձակալության մեկնարկին (այսինքն՝ այն ամսաթվով, երբ տվյալ ակտիվը մատչելի է օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, և ճշգրտվում են կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության վերաչափումից: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է պարտավորություններում ճանաչված կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով արժեքը, առաջացող սկզբնական ուղղակի ծախսումները և վարձավճարները, որոնք կատարվել են մինչև վարձակալության մեկնարկը կամ մեկնարկի ամսաթվին կատարված վարձավճարները, հանած վարձակալության գծով ստացված ցանկացած

արտոնություններ կամ զեղչեր: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ - 2 տարի

Այն դեպքում, երբ վարձակալած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության պայմանագրի ավարտին՝ վերջում, անցնում է Խմբին կամ սկզբնական արժեքը արտացոլում է տվյալ վարձակալած ակտիվի գնման օպցիոն, ապա մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետով: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները նույնպես պետք է արժեզրկման ստուգման (թեսթ) ենթարկվեն:

Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով

Վարձակալության սկսման պահին Խումբը կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով չափում է վարձակալության ժամանակահատվածի ընթացքում կատարված կամ կատարվելիք վարձավճարների իրական արժեքով: Վարձավճարները ներառում են՝ հաստատուն՝ ֆիքսված վճարները (ներառյալ հաստատուն վճարումները), հանած վարձակալության հետ կապված ցանկացած ստացվելիք խրախուսումներ, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը, և գումարները, որոնք, ինչպես սպասվում է, կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձակալության վճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, եթե վարձակալը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումները, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը:

Փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն որևէ ինդեքսից կամ տոկոսադրույքներից (ներառում են, օրինակ՝ վճարումներ՝ կապված սպառողական գների ինդեքսից, վճարումներ՝ կապված ուղենշային տոկոսադրույքից, ճանաչվում են ծախս այն ժամանակաշրջանում, որում այդ դեպքերը տեղի են ունեցել:

Վարձավճարների ներկա արժեքը հաշվարկելիս, Խումբը կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, որովհետև վարձակալության պայմանագրի մեջ ենթադրյալ տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշվել: Վարձակալության սկսելուց հետո կրեդիտորական պարտքերը վարձակալության գծով ավելանում են (աճում են)՝ տոկոսների ավելացումով պայմանավորված, և նվազում են վարձավճարների վճարումով: Բացի դրանից, կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով հոդվածի հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե առկա է ձևափոխություն, փոփոխություն, փոփոխություն վարձակալության ժամանակահատվածում, փոփոխություն վարձավճարում կամ տվյալ ակտիվի ձեռք բերման օպցիոնի գնահատման փոփոխություն:

3.6 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ

նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է՝

Համակարգչային ծրագրեր	10 տարի

3.7 Ֆինանսական գործիքներ

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Խմբի ֆինանսական գործիքների վերաբերյալ, ներառյալ՝

- Խմբի բոլոր ֆինանսական գործիքների ներկայացումը
- Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են Խմբի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքների պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների) նախնական ճանաչման ժամանակ համապատասխանաբար գումարվում կամ պակասեցվում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքից: Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսերը անմիջապես ճանաչվում են շահույթ կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

- Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը

- Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող շահույթում կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

<u>Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող</u>

Պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին, սկզբնական ճանաչումից հետո չափվում են ամորտիզացված արժեքով, այն դեպքում, երբ.

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու համար, և

- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է ապահովել պայմանագրային դրամական միջոցների հոսքեր և պահվում է վաճառքի նպատակով, և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

Մնացած բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն ներառվում վերոնշյալների մեջ, ինքնստինքյան չափվում են իրական արժեքով շահույթ կամ վնասի միջոցով (ԻԱՉՇՎ):

Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող

Բոլոր ֆինանսական պարտավորությունները, սկզբնական ճանաչումից հետո, չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կամ ԻԱՉՇՎ մեթոդը:

Ֆինանսական պարտավորություններ (ԻԱՉՇՎ) ներկայացվող

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՉՇՎ ներկայացվող, երբ ֆինանսական պարտավորությունը հանդիսանում է՝ (ա) ձեռնարկատիրական գործունեության միավորման մեջ ձեռք բերողի պայմանական հատուցումը (բ) պահվում է առևտրային նպատակով կամ (գ) այն նախատեսված է ԻԱՉՇՎ-ի համար:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրային նպատակով պահվող, եթե.

- այն բացառապես ձեռք է բերվել մոտ ապագայում վերավաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ այն հանդիսանում է իդենտիֆիկացվող ֆինանսական գործիքների մի մաս, որը Խումբը միասին է կառավարում և ունի կարճաժամկետ շահույթ ստանալու փաստ
- Այն ածանցյալ գործիք է, բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք հանդիսանում են ֆինանսական երաշխիքի պայմանագրեր կամ նախանշված արդյունավետ հեջավորման գործիքներից:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը միայն երբ ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները սպառվում են կամ երբ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը և էականորեն ակտիվի սեփականության բոլոր ռիսկերն ու հատույցները մեկ այլ կազմակերպության: Եթե Խումբը ոչ փոխանցում է, և ոչ էլ պահպանում սեփականության հետ կապված էականորեն բոլոր ռիսկերն ու հատույցները

և շարունակում է վերահսկել փոխանցված ակտիվը, ապա շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով: Եթե Խումբը կրում է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերը և հատույցները, ապա Խումբը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ճանաչում է ստացված օգուտների գրավադրված փոխառությունները:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի ապաճանաչման ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի և հատուցված կամ հատուցվող գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում: Ի հավելում, պարտքային գործիքի մեջ ներդրման, դասակարգված որպես «Իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող» (ԻԱՉԱՀՖԱ), ապաճանաչման ժամանակ ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը վերադասակարգվում է շահույթ կամ վնասում: Եվ հակառակը, բաժնային գործիքի մեջ ներդրման ապաճանաչման ժամանակ, որը սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը ընտրել է ԻԱՉԱՀՖԱ մեթոդը ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը չի վերադասակարգվում շահույթ կամ վնասում, այլ տեղափոխվում է կուտակված շահույթ կամ վնաս:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը միայն և միայն, երբ Խումբը ֆինանսական գործիքի պարտավորություններից ազատվել է, չեղարկվել է կամ սպառվել է պայմանագրային պարտավորությունը: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության մնացորդային արժեքի և փոխհատուցված կամ փոխհատուցվող գումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում:

Երբ Խումբն առկա վարկատուի հետ մեկ պարտքային գործիքը փոխանակում է մյուսի հետ՝ զգալիորեն տարբեր պայմաններով, ապա այսպիսի փոխանակումը դիտարկվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նույն կերպ, Խումբն առկա պարտավորության կամ դրա մի մասի էական պայմանների փոփոխությունը դիտարկում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ենթադրվում է, որ պայմանները էական տարբեր են համարվում, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքը, ներառյալ բոլոր վճարված վճարումների և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված և ստացված վճարումների տարբերությունը, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքից: Եթե փոփոխությունն էական չէ մինչև փոփոխությունը պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխությունից հետո դրամական հոսքերի ներկա արժեքի (հաշվարկված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով) միջև, ապա տարբերությունը պետք է ճանաչվի շահույթ կամ վնասում այլ եկամուտների կամ վնասների հետ մեկտեղ, որպես փոփոխությունից շահույթ կամ վնաս:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Պարտքային գործիքներում ներդրումների արժեզրկումից կորուստները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ ԻԱՉԱՀՖԱ-ով, Խումբը ճանաչում է հետևյալ դեպքերում՝ սպասվելիք պարտքային կորուստների, ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի պայմանագրերի մասով:

«Դեբիտորական պարտքերի սպասվող կորուստների» (ԴՊՍԿ) գումարները, սկսած համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչումից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին թարմացվում են՝ պարտքային ռիսկում փոփոխություններն արտացոլելու համար:

Խումբը միշտ ճանաչում է ԴՊՍԿ-ը առևտրային դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի համար: Այս ֆինանսական ակտիվներից սպասվող վարկային կորուստները գնահատվում են՝ օգտագործելով պահուստի հաշվարկման համար մշակված համապատասխան մատրիցան՝ հիմնվելով Խմբի պատմական վարկային կորստի փորձի վրա, ճշգրտված պարտապանների համար հատուկ գործոններով, ընդհանուր տնտեսական պայմաններով և ընթացիկ, ինչպես նաև հաշվետու ամսաթվի պայմաններին կանխատեսվող ուղղության գնահատմամբ, ներառյալ, երբ կիրառելի է, դրամի արժեքը ժամանակի մեջ:

Մյուս բոլոր ֆինանսական գործիքների համար Խումբը ճանաչում է ԴՊՍԿ-ն, երբ տեղի է ունեցել սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի զգալի աճ: Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը զգալի չի բարձրացել սկզբնական ճանաչումից ի վեր, ապա Խումբն այդ ֆինանսական գործիքից կորստի պահուստը չափում է 12 ամսվա ԴՊՍԿ-ի համարժեք գումարով:

ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է սպասվող պարտքային կորուստներ ֆինանսական գործիքի ամբողջ կյանքի ընթացքում հնարավոր դեֆոլտի արդյունքում: Եվ հակառակը, 12 ամսվա ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է կյանքի ընթացքում ԴՊՍԿ-ի այն մասը, որը սպասվում է որ կառաջանա ֆինանսական գործիքի հնարավոր դեֆոլտից հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 23-ում:

3.8 Արժեզրկում

Վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկում

Խումբը կանոնավոր կերպով վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ դրանք արժեզրկման տեսանկյունից գնահատելու համար: Խմբի վարկերի արժեզրկման պահուստները ձևավորվում են վարկերի և դեբիտորական պարտքերի պորտֆելում առաջացած արժեզրկումից կորուստները ճանաչելու համար: Խումբը վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստին կատարվող մասհանումների վերաբերյալ գնահատումները դիտարկում է որպես գնահատման անորոշությունների հիմնական աղբյուր, որովհետև ա) դրանք բավականին զգայուն են մի ժամանակաշրջանից մյուսը տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, քանի որ հիմնված են չվճարումների չափերի և ապագա կորուստների գնահատման վերաբերյալ ենթադրությունների հիման վրա, որոնք կատարվել են անցյալ գործունեության փորձի հիման վրա, և բ) ցանկացած զգալի տարբերություն Խմբի կողմից գնահատված կորուստների և դրանց փաստացի չափերի միջև կհանգեցնի անհրաժեշտության, որ Կազմակերպությունը գրանցի հավելյալ պահուստներ, որոնք կարող են ունենալ նշանակալի ազդեցություն նրա ապագա ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Խումբը կիրառում է անհատական և խմբային գնահատումների համադրություն՝ հաշվետու ամսաթվի դրությամբ արժեզրկման պահուստին մասհանումները որոշելիս:

Առանձին վերցրած նշանակալի վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք արժեզրկված չեն, ինչպես նաև բոլոր այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք անհատապես չեն գնահատվել, ներառվում են խմբային հիմունքով գնահատվող վարկերի և դեբիտորական պարտքերի մեջ: Խմբային հիմունքով գնահատվող վարկերը և դեբիտորական պարտքերը խմբավորվում են ըստ նմանատիպ վարկային ռիսկի բնութագրիչների և ժամկետանության կարգավիճակի և գնահատվում համապատասխանաբար: Խմբի ապագա դրամական հոսքերում փոփոխությունները գնահատում է՝ ելնելով նախկին ցուցանիշներից, հաճախորդների նախկին վարքագծից, տվյալ խմբի վարկառուների կողմից վճարումների կատարման իրավիճակի վատթարացման դիտարկելի տվյալներից, ինչպես նաև տնտեսական պայմաններից, որոնք առնչություն ունեն խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման հետ: Ղեկավարությունն օգտագործում է գնահատականներ՝ ելնելով վնասների նախորդ փորձից այն ակտիվների գծով, որոնք ունեն վարկային ռիսկին բնորոշ հատկանիշներ և առկա է վարկերի խմբին համանման արժեզրկման հայտանիշ: Խումբը հիմնվում է ղեկավարության դատողության վրա՝ վարկերի խմբի գծով դիտարկելի տվյալները ճշգրտելու համար այնպես, որ դրանք արտացոլեն պատմական տվյալներում չարտացոլված ընթացիկ հանգամանքները: Խմբային հիմունքով գնահատման մեթոդաբանության խնդիրն է՝ ապահովել, որ արժեզրկումից կորստի պահուստը արտացոլի կորստի պատճառ հանդիսացող իրադարձությունները, որոնք արդեն տեղի են ունեցել, սակայն դեռ չեն գնահատվել անհատական հիմունքով:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստավորումը որոշվում է՝ ելնելով ներկա տնտեսական և քաղաքական հանգամանքներից: Խումբը հնարավորություն չունի կանխատեսելու հանգամանքների փոփոխությունները Հայաստանում և դրանց հնարավոր ազդեցությունները ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստների պահուստի համարժեքության վրա ապագա ժամանակաշրջաններում:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին

այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.9 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

Երբ Խումբը մտադրություն ունի վաճառել ոչ ընթացիկ ակտիվներ կամ ակտիվների խումբ, պոտենցիալ գնորդներին ներկայացրել է վաճառքի առաջարկ, և երբ այդ վաճառքի տեղի ունենալը հավանական է 12 ամսվա ընթացքում, ապա ակտիվը կամ ակտիվների խումբը պետք է դասակարգվի և ներկայացվի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում՝ որպես վաճառքի համար պահվող ակտիվներ:

Վաճառքի համար պահվող ակտիվները չափվում են ակտիվի՝ մինչև վերադասակարգումն ունեցած հաշվեկշռային արժեքից և «իրական արժեքի՝ հանած վաճառքի ծախսումներ»-ից՝ նվազագույնով: Այս ակտիվների գծով մաշվածություն չի հաշվարկվում: Այնուամենայնիվ, վաճառքի համար պահվող որոշ ակտիվներ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվները և հետաձգված հարկային ակտիվները, հաշվառվում են սովորականի պես:

Վաճառքի համար պահվող ակտիվների վաճառքից կամ վերագնահատումից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Այլ եկամուտ» կամ «Այլ ծախսեր» հոդվածներում: Վաճառքի դեպքում տվյալ ակտիվի գծով սեփական կապիտալում առկա վերագնահատման պահուստը վերագրվում է կուտակված շահույթին:

Ոչ ընթացիկ ակտիվը, որն այլևս չի դասակարգվում որպես վաճառքի համար պահվող, չափվում է հետևյալներից նվազագույնով՝

ա) դրա հաշվեկշռային արժեքը նախքան ակտիվը որպես վաճառքի համար պահվող դասակարգելը՝ ճշգրտված հետագա մաշվածության, ամորտիզացիայի կամ վերագնահատումների գծով, որոնք ճանաչված կլինեին, եթե ակտիվը դասակարգված չլիներ որպես վաճառքի համար պահվող, և

բ) դրա փոխհատուցվող գումարը չվաճառելու կամ չբաշխելու վերաբերյալ հետագա որոշում կայացնելու ամսաթվին:

3.10 Սեփական կապիտալ

Խմբի կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Անվանական արժեքի և իրական արժեքի տարբերությունը ճանաչվում է էմիսիոն եկամուտ: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.11 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա

դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով նմանատիպ ռիսկայնությամբ լրացուցիչ փոխառու միջոցներ ներգրավելու տոկոսադրույքը: Պահուստի մնացորդը պարբերաբար վերանայվում է և մնացորդի ճշգրտումը ճանաչվում է առաջընթաց:

3.12 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի (զուտ ակտիվների փոփոխության), ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Խումբն ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները

ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Խումբը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.13 Արժեթղթերով գործարքներ և ներդրումային եկամուտ

Արժեթղթերով գործարքները հաշվառվում են գործարքի (արժեթղթի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտը ներառում է իրական արժեքի բոլոր իրացված և չիրացված փոփոխությունները, արտարժույթի փոխարժեքային տարբերությունները և, որտեղ կիրառելի է, ներառում է տոկոսների և շահաբաժինների տեսքով եկամուտը:

3.14 Ակտիվների կառավարման գործունեություն և կոմիսիոն եկամուտ

Պորտֆելի և այլ կառավարման վճարները ճանաչվում են՝ հիմք ընդունելով կիրառելի ծառայությունների մատուցման պայմանագրերը, որպես կանոն՝ ժամանակային համամասնությամբ: Ակտիվների կառավարման վճարները՝ կապված ներդրումային ֆոնդերի հետ հաշվառվում են համամասնորեն՝ ծառայության մատուցման ժամանակահատվածի ընթացքում:

4 Զուտ տոկոսային եկամուտ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային եկամուտ		
Տոկոսային եկամուտներ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերից	62,609	73,151
Տոկոսային եկամուտներ վարկերից և փոխառություններից	760	660
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ավանդներից	616	506
	63,985	74,317
Տոկոսային ծախս		
Տոկոսային ծախսեր հետգնման պայմանագրերից	(17,593)	(27,860)
Տոկոսային ծախսեր վարձակալության գծով	(1,784)	(830)
Տոկոսային ծախսեր վարկերից և փոխառություններից	(888)	-
	(20,265)	(28,690)
	43,720	45,627

5 Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ		
Տեղաբաշխումից եկամուտ	66,022	69,725
Պահառության գործունեությունից եկամուտ	63,631	50,068
Խորհրդատվական ծառայություններից եկամուտ	47,602	7,500
Արժեթղթերով գործարքների միջնորդավճարներից եկամուտ	6,072	10,874
Այլ ներդրումային ծառայություններից և միջնորդավճարներից եկամուտ	9,404	13,987
	192,731	152,154
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		
Բանկային ծառայությունների համար գանձված միջնորդավճարներ	(52,823)	(44,052)
	(52,823)	(44,052)
	139,908	108,102

6 Զուտ (ծախս)/եկամուտ առևտրային գործունեությունից

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Իրական արժեքով՝ այլ համապարպակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումներից եկամուտ		
Արտարժույթի տարբերությունից եկամուտ	391	2,856
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած օգուտներ	-	113
Առք ու վաճառքից ստացված օգուտներ	431,143	5,319,444
	431,534	5,322,413
Իրական արժեքով՝ այլ համապարպակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումներից վնաս		
Արտարժույթի տարբերությունից վնաս	(3,950)	(4,500)
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած վնասներ	-	(127)
Առք ու վաճառքից առաջացած վնաս	(431,901)	(5,281,296)
	(435,851)	(5,285,923)

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժութային գործառնություններից եկամուտ		
Վերագնահատումից ստացված եկամուտ	1,348	13,944
Առք ու վաճառքից ստացված օգուտներ	537	36
	1,885	13,980
Արտարժութային գործառնություններից վնաս		
Վերագնահատումից ստացված վնաս	(884)	(16,944)
Առք ու վաճառքից ստացված վնաս	(302)	(821)
	(1,186)	(17,765)
Զուտ (ծախս)/եկամուտ առևտրային գործունեությունից	(3,618)	32,705

7

7 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախս	20,821	27,542
Մաշվածություն և ամորտիզացիա	9,513	10,024
Գործուղման և ուսուցման ծախսեր	8,947	1,132
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	8,027	6,438
Գովազդի և ներկայացուցչական ծախսեր	8,232	5,594
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	3,292	3,042
Կապի և հեռահաղորդակցության ծախսեր	2,965	3,054
Վերանորոգման և պահպանման ծախսեր	532	532
Այլ կառավարչական ծասխեր	10,240	996
Այլ ծախսեր	19,191	17,472
	91,760	75,826

8 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	6,335	7,143
Հետաձգված ակտիվների և պարտավորությունների շարժ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման արդյունքում	(138)	258
	6,197	7,401

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	674		30,879	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18% դրույքաչափով)	121	18.0	5,558	18.0
Հարկային վնսի ազդեցություն	-	-	-	-
(Չհարկվող եկամուտ)/չնվազեցվող ծախսեր, զուտ	6,076	901.5	1,843	6.0
Շահութահարկի գծով ծախս	6,197	919.5	7,401	24.0

9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներ	74,095	17,942
Այլ հաշիվներ	4,119	4,286
	78,214	22,228

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված, ժամկետանց կամ գրավադրված չեն, դրանց նկատմամբ չկան որևէ սահմանափակումներ:

10 Պահանջներ հաճախորդների նկատմամբ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաճախորդներից ստացվելիք գումար	11,449	11,048
Արժեթղթերի պահառության գծով ստացվելիք գումար	9,160	7,037
Արժեթղթերով գործարքների գծով ստացվելիք գումար	3,289	85
Շուկա ստեղծողի ծառայությունների գծով ստացվելիք գումար	2,222	-
	26,120	18,170

11 Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝		
Գանձապետական պարտատոմսեր	336,590	318,837
Ընդամենը պետական արժեթղթեր	336,590	318,837
ՀՀ ոչ պետական արժեթղթեր, այդ թվում՝		
Պարտքային գործարքներ	359,914	352,556
Ընդամենը ոչ պետական արժեթղթեր	359,914	352,556
	696,504	671,393

«Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների» դասում հաշվառվող ռեպո համաձայնագրերով վաճառված ՀՀ պետական գանձապետական արժեթղթերի գումարը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 228,563 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 297,759 հազար դրամ): Բոլոր ռեպո համաձայնագրերը կնքվել են ՀՀ ռեզիդենտ բանկերի հետ:

12 Գուդվիլ

Կազմակերպությունը 2025թ.-ի հոկտեմբերի 31-ին գնել է «Նորքքեփ Սեքյուրիթիզ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասը՝ 1,350 հազար դրամով. ընկերության զուտ ակտիվները կազմում են 10 հազար դրամ: Արդյունքում առաջացել է 1,340 հազար դրամ գումարի չափով գուդվիլ:

13 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Մեքենաներ և սարքավորումներ	Գույք և գրասենյակային սարքավորումներ	Համակարգչային տեխնիկա և այլ տեխնիկա	Համակարգչային ծրագրեր	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	411	5,300	9,808	298	1,101	16,918
Ավելացում	-	347	329	-	344	1,020
Օտարում	-	(60)	(89)	-	(11)	(160)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	411	5,587	10,048	298	1,434	17,778
Ավելացում	97	251	1,276	-	818	2,442
Օտարում	(508)	-	-	-	(389)	(897)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	5,838	11,324	298	1,863	19,323
Կուտակված մաշվածություն						
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	(411)	(1,986)	(7,381)	(129)	(563)	(10,470)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	-	(681)	(1,513)	(30)	(219)	(2,443)
Օտարման արդյունքում դուրսգրում	-	42	85	-	4	131
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(411)	(2,625)	(8,809)	(159)	(778)	(12,782)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(55)	(681)	(1,082)	(30)	(339)	(2,187)
Օտարման արդյունքում դուրսգրում	466	-	-	-	277	743
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	(3,306)	(9,891)	(189)	(840)	(14,226)
Հաշվեկշռային արժեք						
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	-	3,314	2,427	169	538	6,448
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	2,962	1,239	139	656	4,996
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	2,532	1,433	109	1,023	5,097

Հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկված ծախսերը 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար, ամբողջությամբ՝ 2,187 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 2,443 հազար դրամ), ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ընդհանուր վարչական ծախսեր» հոդվածում (տես՝ ծանոթագրություն 7):

14 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ստորև ներկայացված է օգտագործման իրավունքի ձևով ակտիվների հաշվեկշռային արժեքը և ժամանակաշրջանի ընթացքում շարժը.

Հազար դրամ	Շենքեր	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք		
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	6,380	6,380
Ավելացում	14,653	14,653
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(7,581)	(7,581)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	13,452	13,452
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(7,326)	(7,326)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,126	6,126

Տարեվերջի դրությամբ ապագա նվազագույն վարձավճարները, որոնք ենթակա են վճարման չչեղարկվող վարձակալությունների գծով.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	7,011	6,616
1-ից 5 տարի	-	7,711
	7,011	14,327

15 Հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություններ)

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	3,322	10,232
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում/(ծախս) (տես՝ ծանոթագրություն 8)	138	(258)
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված	(3,727)	(6,652)
Տարեվերջի մնացորդ	(267)	3,322

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2025թ. հունվարի 1	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված	2025թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ				
Ստեղծված պահուստների գծով	960	-	(17)	943
Վարձակալական ակտիվների գծով	2,579	-	(2,579)	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով	2,516	(3,727)	-	(1,211)
	6,055	(3,727)	(2,596)	(268)
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միձոցների գծով	(311)	-	155	(156)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(2,422)	-	2,579	157
	(2,733)	-	2,734	1
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	3,322	(3,727)	138	(267)

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2024թ. հունվարի 1	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ				
Հիմնական միջոցների գծով	4	-	(4)	-
Ստեղծված պահուստների գծով	891	-	69	960
Վարձակալական ակտիվների գծով	1,304	-	1,275	2,579
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով	9,168	(6,652)	-	2,516
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով	13	-	(13)	-
	11,380	(6,652)	1,327	6,055
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միձոցների գծով	-	-	(311)	(311)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(1,148)	-	(1,274)	(2,422)
	(1,148)	-	(1,585)	(2,733)
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	10,232	(6,652)	(258)	3,322

16 Այլ ակտիվներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստացվելիք գումարներ արժեթղթերի վաճառքի գծով	1,993	1,787
Կանխավճարներ մատակարարներին	2,669	4,405
Կանխավճարներ շահութահարկի գծով	-	523
Ապագա ժամանակաշրջանի ծախս	909	1,173
Տրված փոխառությունների գծով ստացվելիք գումար	-	73,094
Աշխատակիցներին տրված առհաշիվ գումարներ	625	-
	6,196	80,982

17 Դրամական շուկայից ստացված փախառություններ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռեպո համաձայնագրեր	228,563	297,760
Հաշվեգրած տոկոսներ	260	284
	228,823	298,044

Խումբն ունի գործարքներ հետգնման կամ հակադարձ հետգնման համաձայնագրերով:

Հետգնման համաձայնագրերով վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին՝ Խմբի կողմից կանխիկ/անկանխիկ ստացված դրամի փոխարեն: Այս ֆինանսական ակտիվները կարող են վերագրավադրվել կամ վերավաճառվել գործընկերների կողմից՝ Խմբի՝ իր պարտավորությունների չկատարման դեպքում, հակառակ դեպքում, գործընկերը պարտավորվում է վերադարձնել արժեթղթերը՝ պայմանագրի ավարտին: Այս արժեթղթերի գծով բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվել են և այդ իսկ պատճառով դրանք չեն ապաճանաչվել:

18 Վարձակալության գծով պարտավորություններ

Ստորև ներկայացված են վարձակալության գծով պարտավորությունները (ներառյալ վարձավճարի գծով պարտավորությունները) և ժամանակաշրջանի ընթացքում փոփոխությունները.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սկզբնական մնացորդ	14,327	7,244
Ավելացում	-	14,653
Տոկոսների ավելացում	1,784	830
Վճարված վարձավճար	(9,100)	(8,400)
Տարվա վերջի դրությամբ	7,011	14,327
Ընթացիկ	7,011	6,616
Ոչ ընթացիկ	-	7,711
Տարվա վերջի դրությամբ	7,011	14,327

Ստորև ներկայացված է շահույթում կամ վնասում ճանաչված գումարները.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն	7,326	7,580
Տոկոսային ծախսեր՝ կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	1,784	830
	9,110	8,410

19 Փոխառություններ

Խումբը 50,000 հազար դրամ փոխառություն է ստացել 6% տոկոսադրույքով՝ մինչև 2028թ. մարտի 6-ը մարման ժամկետով: Փոխառությունը չի զեղչվել, քանի որ ոչ էական տարբերություն է շուկայական տոկոսադրույքից:

20 Այլ պարտավորություններ և պահուստներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր	24,450	11,446
Պահուստներ	3,846	4,495
	28,296	15,941

21 Կապիտալ և պահուստներ

21.1 Բաժնետիրական կապիտալ

Հազար դրամ

Տեղաբաշխված բաժնեմասեր	2025թ.	2024թ.
43,402 բաժնեմաս, յուրաքանչյուրը՝ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով	434,020	434,020

31.12.2025թ. և 31.12.2024թ. դրությամբ մասնակիցների վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև.

	2025թ.		2024թ.	
Մասնակից	Մասնակցության գումարը (հազար դրամ)	Մասնակցության չափը (%)	Մասնակցության գումարը (հազար դրամ)	Մասնակցության չափը (%)
Դավիթ Հակոբյան	312,670	72.040459	281,760	64.918667
Կարել Խրիս Հոֆստրա	77,950	17.960002	86,620	19.957606
Արմեն Գրիգորյան	-	-	65,640	15.123727
Դայմենշն Գրուպ ՓԲԸ	43,400	9.999539	-	-
	434,020	100	434,020	100

Խումբն ունի կանոնադրական կապիտալն ավելացնելու նպատակով հայտարարված, բայց չտեղաբաշխված 2,000,000 հատ հասարակ բաժնետոմս, յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: 2025թ.-ի ընթացքում հիմնադիրների կողմից չի ունեցել կապիտալի ներդրում (2024թ.՝ 2,350 հազար դրամի կապիտալի ներդրում):

21.2 Սեփական կապիտալի այլ տարրեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Իրական արժեքի փոփոխությունից	24,668	32,338
Արժեզրկման կորուստ պահուստի փոփոխությունից	50	(551)
Այլ համապարփակ արդյունքին վերագրվող շահութահարկ	(3,727)	(6,652)
Նախորդ ժամանակաշրջանի վերագնահատման վերադասակարգում շահույթին կամ վնասին	(3,962)	4,616
	17,029	29,751

22 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

23 Ֆինանսական գործիքներ

23.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Խմբի ֆինանսական գործիքների վերաբերյալ, ներառյալ՝

- Ֆինանսական գործիքի յուրաքանչյուր տեսակի գծով սպեցիֆիկ տեղեկատվություն
- Ֆինանսական գործիքների իրական արժեքի որոշման գծով տեղեկատվություն, ներառյալ դատողությունները և գնահատումների անորոշությունները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ ամորտիզացված արժեքով չափվող		
- Դրամական միջոցներ և համարժեքներ	78,214	22,228
- Պահանջներ հաճախորդների նկատմամբ	26,120	18,170
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	696,504	671,393
- Այլ ակտիվներ	6,196	80,982
	807,034	792,773

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական պարտավորություններ՝ ամորտիզացված արժեքով չափվող		
- Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	228,823	298,044
- Պարտավորություններ այլ գործընկերների նկատմամբ	28,824	26,646
- Փոխառություններ	50,000	-
	307,647	324,690

23.2 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Խումբը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

23.3 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով, ֆունտ ստեռլինգիով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք ենթարկվում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Ֆունտ ստեռլինգի	Եվրո	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և համարժեքներ	41,453	-	35	41,488
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	63,519	-	3,746	67,265
Արժեթղթերի վաճառքի գծով ստացվելիք գումարներ	776	387	830	1,993
	105,748	387	4,611	110,746
Ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	3,456	-	-	3,456
	3,456	-	-	3,456
Զուտ արդյունք	102,292	387	4,611	107,290

Հոդված 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Ֆունտ ստեռլինգի	Եվրո	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և համարժեքներ	11,692	-	21	11,713
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	170	-	-	170
Արժեթղթերի վաճառքի գծով ստացվելիք գումարներ	-	374	-	374
	11,862	374	21	12,257
Ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ գործընկերների նկատմամբ	2,974	-	-	2,974
	2,974	-	-	2,974
Զուտ արդյունք	8,888	374	21	9,283

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, ֆունտ ստեռլինգի և եվրոյի նկատմամբ դրամի 10% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2024թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2024թ.՝ 10%):

Դրամի 10%-ով (2024թ.՝ 10%) արժեվորումն ԱՄՆ դոլարի, ֆունտ ստեռլինգի և եվրոյի նկատմամբ կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Ֆունտ ստեռլինգի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Շահույթ կամ վնաս	10,229	889	39	37	461	2
	10,229	889	39	37	461	2

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված

վերլուծությունը կարելի է համարել Խմբի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Խումբը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գծով գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Խմբի տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	2025թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		2024թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	
	ՀՀ դրամ	Արտարժույթ	ՀՀ դրամ	Արտարժույթ
Տոկոսակիր ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	8.89%	9.00%	9.66%	5.44%
Տոկոսակիր պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7.50%	5.50%	10.25%	0.00%

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Խմբի նկատմամբ:

Խումբը կրում է վարկային ռիսկ առաջին հերթին ներդրումային գործունեության և բանկերում մնացորդների գծով: Խումբը փորձում է կառավարել իր վարկային ռիսկը՝ կիրառելով վերահսկվող ներդրումային ռազմավարություն, ինչպես նաև կիրառելով ողջամիտ դատողություն բանկային գործընկերներ ընտրելիս:

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է վարկային ռիսկի վերահսկողության և կառավարման համար:

ՖՀՄՍ 9-ի շրջանակներում ակնկալվող վարկային կորուստների մոդելի պահանջներին ենթակա Խմբի ֆինանսական ակտիվներն են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, աշխատակիցներին տրվող վարկերը և այլ դեբիտորական պարտքերը: Այս ակտիվների մասով վարկային ռիսկերի կենտրոնացում չի արձանագրվել: Ոչ մի ակտիվ չի համարվում արժեզրկված և այս ժամանակաշրջանում համապատասխան գումարներ դուրս չեն գրվել:

Խումբը ենթակա է վարկային ռիսկերի պարտքային գործիքների, դրամի շուկայի միջոցների և համանման արժեթղթերի և ածանցյալ ակտիվների մասով: Ֆինանսական ակտիվների այսպիսի դասակարգերը ենթակա չեն ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջներին, քանի որ դրանք չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով: Այս ակտիվների հաշվեկշռային արժեքները, ՀՀՄՍ 39 և ՖՀՄՍ 9 ստանդարտների համաձայն, ներկայացնում են վարկային ռիսկի առավելագույն չափը այս ֆինանսական գործիքների մասով համապատասխան հաշվետու ամսաթվերի դրությամբ:

Ստորև ներկայացված է վարկային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ ամորտիզացված արժեքով չափվող		
- Դրամական միջոցներ և համարժեքներ	78,214	22,228
- Պահանջներ հաճախորդների նկատմամբ	26,120	18,170
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	696,504	671,393
- Այլ ակտիվներ	6,196	80,982
	807,034	792,773

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի բոլոր ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ՀՀ տարածքում գտնվող պայմանագրային կողմերի հետ են:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2025թ.

Հազար դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
Ոչ ածանցյալ պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր	228,823	-	-	-	-	228,823
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	-	-	28,824	-	28,824
	228,823	-	-	28,824	-	257,647

2024թ.

Հազար դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
Ոչ ածանցյալ պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր	298,044	-	-	-	-	298,044
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	-	-	26,646	-	26,646
	298,044	-	-	26,646	-	324,690

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը:

23.4 Կապիտալի ռիսկի կառավարում

Խմբի ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ֆինանսական լծակը (զուտ պարտավորությունը բաժանած ընդհանուր կապիտալի վրա) հետևյալ կերպ.

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տարվա շահույթ	7,717	23,478
Սովորական բաժնետոմսեր	7,717	23,478
Սովորական բաժնետոմսերի միջին թիվը	43,402	43,402
Մեկ մաժնետոմսին բաժին ընկնող շահույթ	0.178	0.541

23.5 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված իրական արժեքի չափումները և իրական արժեքի հիերարխիա

Ֆինանասական հաշվետվությունները կազմելիս Խմբի որոշ ակտիվներ և պարտավորություններ չափվում են իրական արժեքով: Խմբի ղեկավարությունը սահմանում է իրական արժեքի չափման համապատասխան գնահատման տեխնիկա:

Հազար դրամ		Իրական արժեքի չափման հիերարխիա		
Նկարագրություն	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	78,214	78,214	-	-
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	26,120	26,120	-	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	696,504	-	696,504	-
Ընդամենը	800,838	104,334	696,504	-

Հազար դրամ		Իրական արժեքի չափման հիերարխիա		
Նկարագրություն	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22,228	22,228	-	-
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	18,170	18,170	-	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	671,393	-	671,393	-
Ընդամենը	711,791	40,398	671,393	-

Հազար դրամ		Իրական արժեքի հիերարխիայի չափում		
Նկարագրություն	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	228,823	228,823	-	-
Պարտավորություններ այլ գործընկերների նկատմամբ	26,646	-	26,646	-
Ընդամենը	255,469	228,823	26,646	-

Հազար դրամ		Իրական արժեքի հիերարխիայի չափում		
Նկարագրություն	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	298,044	298,044	-	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	26,646	-	26,646	-
Ընդամենը	324,690	298,044	26,646	-

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ կետերի և ֆինանսական գործիքների, որոնք յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում չափվել են վերագնահատված արժեքով կամ իրական արժեքով, ինչպես ներկայացված է հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը սովորաբար դրանց հաշվեկշռային արժեքն է: Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք ակնկալվում է, որ կստացվեն ընթացիկ տոկոսադրույքներով համանման պարտքային ռիսկեր ունեցող և մնացորդային մարման ժամկետներով նոր գործիքների դեպքում: Օգտագործված զեղչային դրույքաչափերը կախված են գործընկերոջ պարտքային ռիսկից:

Առևտրային և այլ ֆինանսական դեբիտորական պարտքերի և դրմական միջոցների և դրանց համարժեքների հաշվեկշռային գումարները մոտ են դրանց իրական արժեքներին:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող պարտավորություններ

Պարտավորությունների իրական արժեքները որոշվել են գնահատման մեթոդների կիրառմամբ: Սահմանված մարման ժամկետով ֆիքսված տոկոսադրույքներով գործիքների իրական արժեքը գնահատվել է՝ հիմնվելով ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա, որոնք զեղչվել են համանման պարտքային ռիսկ և մարման մնացորդային ժամկետ ունեցող նոր գործիքների համար գործող ընթացիկ տոկոսադրույքներով: Ցպահանջ կամ ծանուցման ժամկետից հետո մարման ենթակա պարտավորությունների իրական արժեքը գնահատվել է որպես ցպահանջ վճարման ենթակա գումար՝ զեղչված գումարի վճարման պահանջի ներկայացման առաջին հնարավոր ամսաթվից սկսած:

Փոխառությունների և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքներին:

23.6 Կապիտալի կառավարում

Կազմակերպության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Կազմակերպությունը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ նեդրումային կազմակերպությունների համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն՝ ներդրումային ընկերությունները, պետք է ապահովեն կանոնադրական կապիտալի նվազագույն չափ՝ 1 միլիոն ՀՀ դրամ, և ընդհանուր կապիտալի նվազագույն չափ, որը, սահմանված է 300 միլիոն ՀՀ դրամ այն ընկերությունների համար, որոնք արժեթղթով գործարքներ են կատարում իրենց հաշվին և իրենց անունից: 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խումբն ապահովում է նվազագույն կանոնադրական կապիտալի և նվազագույն ընդհանուր կապիտալի պահանջները: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն Կազմակերպության ընդհանուր կապիտալը կազմել է՝ 500,826 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 485,358), իսկ կանոնադրական կապիտալը՝ 434,020 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 434,020 հազար դրամ): Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Կազմակերպության մոտեցումը չի փոփոխվել: 2025թ. և 2024թ. ընթացքում Կազմակերպությունում վերոհիշյալ նորմատիվների գծով խախտումներ առկա չեն եղել:

24 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

25 Պայմանականություններ

25.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան

ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

25.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

25.3 Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Խումբը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

Ղեկավարությունը տեղյակ չէ Խմբի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

26 Դուստր ընկերությունների ձեռքբերում

Խումբը 2025թ.-ի հոկտեմբերի 31-ին գնել է Նորքքեփ Սեքյուրիթիզ ՍՊԸ-ի 100% բաժնեմասը 1,350 հազար դրամով. դուստր ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10 հազար դրամ: Այն հետագայում վաճառվել է 2026 թ. փետրվարին:

27 Դուստր ընկերությունների օտարում

Իրացված զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	Դուստր ընկերություն 1՝ Դայմենշն Ֆանդզ Մենեջմենթ ՍՊԸ	
	Հաշվե-կշռային արժեք	Իրական արժեք
Ընթացիկ ակտիվներ		
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	15	15
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	743	743
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	155	155
Հետաձգված հարկային ակտիվներ	140	140
Ընդամենը ակտիվներ	1,053	1,053
Սեփական կապիտալ և պարտավորություններ		
Կապիտալ և պահուստներ		
Կանոնադրական կապիտալ	1,000	1,000
Կուտակված շահույթ/(վնաս)	(536)	(536)
	464	464
Ընթացիկ պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	84	84
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Պահուստներ	506	506
	590	590
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	1,054	1,054

Օտարման արդյունքում զուտ դրամական միջոցների ներհոսքը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամական միջոցներով և դրանց համարժեքներով ստացված հատուցում	1,000	-
Հանած՝ փոխանցված դրամական միջոցները և դրանց համարժեքները	-	-
	1,000	-

28 Գործարքներ կապակցված կողմերի միջև

Խմբի կապակցված կողմերը ներառում են Խմբի մասնակիցներին, հիմնական ղեկավար անձնակազմին և նրանց հետ կապակցված կազմակեպությունները:

28.1 Վերահսկողություն

Խումբը վերահսկվում է Դավիթ Հակոբյանի կողմից:

28.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Կապակցված կողմերի միջև գործարքները իրականացվել են շուկայական գներով: Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

	2025թ.		2024թ.	
Հազար դրամ	Գործարքի գումար	Մնացորդ	Գործարքի գումար	Մնացորդ
Պահառության գործունեություն բաժնետերերի և դուստ ընկերության կառավարվող ֆոնդի հետ	647	97	533	267
Տրված առհաշիվ գումարներ	2,004	625	-	-
Կրեդիտորական պարտքեր առհաշիվ գումարների գծով	4,836	-	-	-
Ստացված փոխառություն բաժնետերերից	-	-	-	-
Դուստ ընկերության կողմից կառավարվող ֆոնդ	1,066	84	982	80
	8,553	806	1,515	347

28.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները կանոնադրական կապիտալում էական մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Անձնակազմի գծով ծախսեր» հոդվածում.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովության վճարները	16,274	17,767
	16,274	17,767